ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31. 08. 2022 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 18-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի՝ 2022-2023 ուստարվա նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրվող «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակների հավակնորդների առաջադրման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի մասին ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ կազմվել են ֆակուլտետում գործող 7 կրթական ծրագրերով 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի դասացուցակները, ուղարկվել ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքում տեղադրման, դրանց մասին իրազեկվել են դասախոսները և ուսանողները: Ամբիոններին հատկացվել և լրացվել են դասամատյանները: Ստուգվել և բաշխվել է լսարանային ֆոնդը՝ ըստ համապատասխան կուրսերի և խմբերի: Հստակեցվել են հրավիրված դասախոսների երթուղիների ժամանակացույցները:

Զեկուցողը հավելեց, որ ֆակուլտետը պատրաստ է ս.թ. սեպտեմբերի 1-ից սկսելու նոր՝ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը նշեց, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրվող «Մոնթե Մելքոնյան» և «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակներին կարող են հավակնել 2 և ավել կիսամյակ անընդմեջ գերազանցություն, պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն ունեցող ուսանողները: Ըստ այդմ՝ «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի համար նպատակահարմար է համարվում ներկայացնել «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Արթուրի Ստեփանյանի թեկնածությունը, ով ունեցել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լուսյա Արամի Շախպարյանի թեկնածությունը, ով ունեցել է վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը: Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները հավանություն տվեցին առաջադրված թեկնածություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Առաջադրված ուսանողների թեկնածությունները ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի հաստատմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. Աղաբաբյան